ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կապան համայնքի Շահումյան փողոցի մայթերի վերանորոգման, ծառատնկման, կանաչապատ տարածքների վերականգնման և բարեկարգման աշխատանքների կատարման

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/3

ք. Կապան 14 օգոստոս 2020թ.

Կապանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գևորգ Փարսյան, որը գործում է ՏԻՄ օրենքի և կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Կապանի <<Նորոգշին >> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռազմիկ Փարսյանի, որը գործում է ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Կապան համայնքի Շահումյան փողոցի մայթերի վերանորոգման, ծառատնկման, կանաչապատ տարածքների վերականգնման և բարեկարգման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ըստ Հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Էլեկտրոնային գնումներե բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Օրենսդրությունե բաժնի ,Ֆինանսների նախարարի հրամաններե ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 114021517 (մեկ հարյուր տասնչորս միլիոն քսանմեկ հազար հինգ հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ, որից 19003586 (տասնինը միլիոն երեք հազար հինգ հարյուր ութսունվեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Ընդ որում, դրամական միջոցների փոխանցումը կատարված աշխատանքների դիմաց կատարվում է հետևյալ կերպ՝

5.3.1 գումարի 40տոկոսը վճարվում է համայնքային բյուջեից.

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Կատարողի կողմից սկզբում հանձնման-ընդունման արձանագրությունը կազմվում և հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրվում պայմանագրի գնի 40 տոկոսի չափով՝ նշելով համայնքային բյուջեի համապատասխան բյուջետային հաշվեհամարը՝ 900312512040՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն:

5.3.2 գումարի 60 տոկոսը վճարվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրի հիման վրա՝ պետական բյուջեից.

Կատարողի կողմից հանձնման-ընդունման արձանագրությունը կազմվում և հաշիվ-ապրանքագիրը դուրս է գրվում պայմանագրի գնի 60 տոկոսի չափով՝ նշելով համայնքային բյուջեի համապատասխան բյուջետային հաշվեհամարը՝ 900312000491՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն:

Պատվիրատուի կողմից հայայնքի մասնաբաժնով վճարում կատարվելուց հետո պայմանագրի, հանձնման-ընդունման արձանագրության, հաշիվ-ապրանքագրի և վճարային փաստաթղթերի սկանավորված տարբերակները ներկայացվում են ՀՀ Սյունիքի մարզպետարան: Մարզպետարանի կողմից փաստաթղթերը համապատասխան մարմիններ ներկայացվելուց և հաստատվելուց հետո միայն պետական բյուջեից հատկացվում են ֆինանսական

միջոցներ՝ փոխանցում կատարելով մարզպետարանին: Գումարը մարզպետարանի կողմից համայնքի բյուջետային հաշվին փոխանցվելուց հետո Գնորդի կողմից կատարվում է դրամական միջոցների փոխանցում Վաճառողին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված հավելյալ համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ծեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

---

[31] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապանի համայնքապետարան	Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ
Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա	Ք. Կապան, Մ. Հարությունյան 1ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ 900312512040 /40%, համայնք/	ՀՀ1150018295365380
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/	ՀՎՀՀ 09400653
ՀՎՀՀ 09426088	
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

14

Հավելված թիվ 1
օգոստոս 2020 թ. կնքված
N ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կապան համայնքի Շահումյան փողոցի մայթերի վերանորոգման, ծառատնկման, կանաչապատ տարածքների վերականգնման և բարեկարգման

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուրի արժեքը միավորի հաշվարկում	Ընդհանուրի արժեքը հազար դրամ
	Շինարարական աշխատանքներ				
	I. Քանդման աշխատանքներ				
1	Հին բազալտե եզրաքարերի քանդման համար երթևեկելի մասի ա/բ ծածկի քանդում ձեռքով, գոյություն ունեցող եզրամայթից 20-30սմ հեռավորությամբ	100մ2	3.430	200.00	686.00
2	բարձում ավտոինքնաթափեր	1000մ3	0.0172	900.00	15.44
3	տեղափոխում լցակույտ 10կմ հեռավորությամբ	տ	34.00	2.70	91.80
4	Բազալտե եզրաքարերի քանդում	մ	1770.710	0.30	531.21
5	բարձում ավտոինքնաթափեր	1000մ3	0.080	900.00	71.71
6	տեղափոխում լցակույտ 10 կմ հեռավորությամբ	տ	175.30	2.70	473.31
7	Մայթերի և սիզամարգերի քանդում հմիջ=10սմ հաստությամբ, 10eIV գրունտներում	1000մ3	0.6911	800.00	552.87
8	բարձում ավտոինքնաթափեր	1000մ3	0.6911	900.00	621.98
9	տեղափոխում լցակույտ 10կմ հեռավորությամբ	տ	1347.45	2.70	3638.12
10	Մինչև 160մմ տրամագծով ծառերի հատում	100հատ	0.990	50.00	49.50
11	Մինչև 160մմ տրամագծով ծառերի արմատների հանում	100հատ	0.990	20.00	19.80
11	160-240մմ տրամագծով ծառերի հատում	100հատ	0.250	70.00	17.50
12	160-240մմ տրամագծով ծառերի արմատների հանում	100հատ	0.250	30.00	7.50
13	240-320մմ տրամագծով ծառերի հատում	100հատ	0.140	150.00	21.00
14	240-320մմ տրամագծով ծառերիի արմատների հանում	100հատ	0.140	80.00	11.20
15	320մմ և ավելի տրամագծով ծառերի հատում	100հատ	0.230	1000.00	230.00
16	320մմ և ավելի տրամագծով ծառերի արմատների հանում	100հատ	0.230	800.00	184.00
17	բարձում ավտոինքնաթափեր	1000մ3	0.082	2000.00	164.55
18	տեղափոխում լցակույտ 10 կմ հեռավորությամբ	տ	98.73	2.70	266.57
19	Հին մետաղական աղբամանների ապամոնտաժում 30 հատ	տ	0.750	10.00	7.50
20	բարձում ավտոինքնաթափեր	1000մ3	0.006	500.00	2.93
21	տեղափոխում լցակույտ 10կմ հեռավորությամբ	տ	6.00	2.70	16.20
	Ընդամենը				**7680.68**
	II. Մայթերի և սիզամարգերի կառուցում				
22	Բազալտե եզրաքարերի տեղադրում 150x300մմ չափսի բետոնե հիմքի վրա	100մ	13.700	915.00	12535.50
23	Բազալտե եզրաքարերի տեղադրում 100x200մմ չափսի բետոնե հիմքի վրա	100մ	12.260	715.00	8765.90
24	Նոր կառուցվող մայթի բետոնե սալարկի հիմքի փռում 12սմ հաստությամբ ավազակոպիճ	մ3	629.00	3.60	2264.40
25	Նոր կառուցվող մայթի բետոնե մոխրագույն, ձևավոր սալարկ (տոմետ) 4սմ հաստությամբ, 3սմ հաստությամբ 1:3 հարաբերությամբ ցոմետավազե չոր շաղախի վրա	մ2	5224.00	6.10	31866.40
26	Բուսական բնահողի մշակում էքսկավատորով 0.5խ.մ տարողությամբ բարձելով ինքնաթափ ավտոմեքենաներին սիզամարգերի համար	1000մ3	0.116	800.00	92.80
27	Բնահողի տեղափոխում 10 կմ հեռ վրա	տ	150.80	2.70	407.16
28	Բուսահողի ներկրում և փռում տեղում 100 մմ շերտով	100մ2	11.60	200.00	2320.00
29	Տարածքի կանաչապատման իրականացում գազոնի ցանում	100մ2	11.60	80.00	928.00
30	Նոր աղբամանների տեղադրում	հատ	65.00	25.00	1625.00

	Ընդամենը				60805.16
	III. Ա/Բ պատվածքի կառուցում				
	IIIա. Նոր տեղադրված բազալտե եզրաքարի և երթևեկելի մասի հատման տեղամասի կառուցում				
31	Խճային հիմք	մ3	31.50	7.95	250.43
32	Տաք մանրահատիկ ա/բետոն h=5սմ „Բ"տիպ	100մ2	4.110	540.00	2219.40
	IIIբ. Մուտքերի կառուցում				
33	Խճային հիմք h=12սմ	մ3	18.00	7.95	143.10
34	Տաք մանրահատիկ ա/բետոն h=5սմ „Բ"տիպ	100մ2	1.520	540.00	820.80
	Ընդամենը				3433.73
	IV. Պարապետի կառուցում				
35	350x300մմ չափի պարապետի հիմքի կառուցում B15 դասի բետոնից, 52մ երկարությամբ	մ3	5.50	62.00	341.00
36	250x400մմ չափի պարապետի իրանի կառուցում B15 դասի բետոնից, 52մ երկարությամբ	մ3	5.20	65.00	338.00
	Ընդամենը				679.00
	V. Իջատեղերի կառուցում				
37	B15 դասի բետոնի հիմքի կառուցում h=10սմ	մ3	0.10	56.00	5.60
38	Սրբատաշ բազալտե սալարկ h=3սմ	մ2	10.80	22.00	237.60
	Ընդամենը				243.20
	VI. Անձրևաջրերի հեռացման համակարգ				
39	Անձրևաջրերի հեռացման համակարգի Հանգույց (ցանց) 200x400մմ	հատ	15.00	11.00	165.00
40	Անձրևաջրերի հեռացման համակարգի վերանորոգում B15 դասի բետոնով	մ3	0.20	56.00	11.20
	Ընդամենը				176.20
	VII. Դիտահորեր				
41	Դիտահորերի լրաբետոնացում միաձույլ բետոնով B-15 հատ 8	մ3	1.16	85.00	98.60
42	Դիտահորի երկաթբետոնե ծածկի սալի տեղադրում	հատ	1.00	115.00	115.00
43	Թուջե մտոցի տեղադրում	հատ	1.00	75.00	75.00
	Ընդամենը				288.60
	Արհեստական լուսավորություն				
1	Հենասյուն m=134.1կգ	հատ	59.00	7.50	442.50
2	Խողովակ D=100x4, (ℓ=7.8մ 59 հատ)	մ	460.20	4.60	2116.92
3	Խողովակ D=70x3.2, (ℓ=4.8մ, 59 հատ)	մ	283.20	3.50	991.20
4	Խողովակ D=150x4, (L=0.06մ x 4 հատ x 59 հատ)	մ	14.16	7.20	101.95
5	Միաճյուղ բարձակ Φ40x3.0մմ, L=2.0մ	հատ	59.00	1.80	106.20
6	Միաճյուղ բարձակ Φ40x3.0մմ, L=1.5մ	հատ	59.00	1.50	88.50
7	Թերթավոր պողպատ 120x120x4մմ m=0.5կգ ,90x90x4մմ m=0.25կգ	տ	0.0443	600.00	26.55
8	Բետոն B15	մ3	16.52	56.00	925.12
9	Ամրան A500c Φ16մմ	տ	0.1475	420.00	61.95
10	Լուսատուների լիցքավորում ՊՎ 2x2,5մմ2 հաղորդալարով	100մ	8.91	35.00	311.82
11	Հենասյան ներկում 2 շերտ	100մ2	2.4190	250.00	604.75
12	Փոսորակի քանդում	1000մ3	0.03717	6000.00	223.02
13	Գրունտի հետլիցք	100մ3	0.2065	400.00	82.60
14	Ավելորդ գրունտի բարձում ավտոինքնաթափեր	1000մ3	0.0165	1000.00	16.52
15	Ավելորդ գրունտի տեղափոխում 10 կմ	տ	29.74	2.70	80.29
16	ԼԵԴ լուսատու 60Վտ, 6600Լմ	հատ	59.00	24.00	1416.00
17	ԼԵԴ լուսատու 30Վտ, 3700Լմ	հատ	59.00	21.00	1239.00
18	Ճառագայթային հողանցիչների մոնտաժում Φ12մմ կլոր պողպատով (1x5մ)	100մ	2.95	190.00	560.50
19	Φ12մմ կլոր պողպատ	տ	0.1814	500.00	90.70
20	Խրամուղու քանդում հողանցման համար	1000մ3	0.04425	5000.00	221.25
21	Գրունտի հետլիցք	100մ3	0.4425	400.00	177.00
22	Մետաղական ճյուղավորման տուփերի մոնտաժում	հատ	59.00	2.50	147.50
23	Խրամուղու քանդում մալուխի համար	1000մ3	0.5446	3500.00	1906.24
24	Գրունտի բարձում ավտոինքնաթափեր	1000մ3	0.5446	800.00	435.71
25	Ավելորդ գրունտի տեղափոխում 10կմ	տ	871.42	2.70	2352.84
26	Ավազե անկողնակի պատրաստում	մ3	148.90	5.80	863.62
27	Գոֆրեաձև խողովակի փռում խրամուղում Φ40մմ	մ	1702.00	0.65	1106.30

28	Մալուխի մոնտաժում գոֆրեաձև խողովակում ԱԲՎԳ-1 4x25	100մ	17.35	190.00	3296.50
29	Մալուխի ծածկում ազդանշանային ժապավենով 150մմ լայնությամբ	100մ	17.02	5.00	85.10
30	Ավազակոպիճի հետլիցք խրամուղում	100մ3	3.9574	380.00	1503.81
31	Հենասյան ապամոնտաժում m=161.6կգ	հատ	53.00	2.00	106.00
32	Լուսատուների ապամոնտաժում	հատ	78.00	0.30	23.40
	Ընդամենը				**21711.363**
	Ընդհանուր				**95017.931**
	ԱԱՀ 20.00%				**19003.586**
	Ընդամենը, ներառյալ ԱԱՀ				**114021.517**

Գնման առարկա է հանդիսանում Կապան համայնքի Շահումյան փողոցի մայթերի վերանորոգման, ծառատնկման, կանաչապատ տարածքների վերականգնման և բարեկարգման աշխատանքները

Աշխատանքներն իրականացվում են կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերին համաձայն, բարձր որակով:

Կապալառուն աշխատանքները կատարում է Կապան համայնքի ըստ ծավալաթերթում նշված հասցեի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կապանի համայնքապետարան
Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312512040 /40%, համայնք/
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ
Ք. Կապան, Մ. Հարությունյան 1ա
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ115001829536538 0
ՀՎՀՀ 09400653

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
14 օգոստոս 2020 թ. կնքված
N ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 *ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կապան համայնքի Շահումյան փողոցի մայթերի վերանորոգման, ծառատնկման, կանաչապատ տարածքների վերականգնման և բարեկարգման ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	**Շահումյան փողոցի մայթերի վերանորոգման, ծառատնկման, կանաչապատ տարածքների վերականգնման և բարեկարգման աշխատանքներ**	Պայմանագրի կնքման օր	2020թ. Դեկտեմբերի 25
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի կնքման օր	2020թ. Դեկտեմբերի 25

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կապանի համայնքապետարան
Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312512040 /40%, համայնք/
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ
Ք. Կապան, Մ. Հարությունյան 1ա
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ115001829536538 0
ՀՎՀՀ 09400653

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
14 օգոստոս 2020 թ. կնքված
N ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱԾՁԲ-20/3 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի									
հրավերով նախատեսված տեսակաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը, հաշվեհամար			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում				
					սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177-1	Շահումյան փողոցի մայթերի վերանորոգման, ծառատնկման, կանաչապատ տարածքների վերականգնման և բարեկարգման աշխատանքներ	900312512040	114021517	45608606,8	45608606,8	45608606,8	45608606,8	45608606,8
			900312000491		68412910,2	68412910,2	68412910,2	68412910,2	68412910,2

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Կապանի համայնքապետարան
Ք. Կապան,Ա. Մանուկյան 5ա
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900312512040 /40%, համայնք/
ՀՀ 900312000491/60%, սուբվենցիա/
ՀՎՀՀ 09426088

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ
Ք. Կապան, Մ. Հարությունյան 1ա
<<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ
ՀՀ11150018295365380
ՀՎՀՀ 09400653

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
14 օգոստոս 2020 թ. կնքված
N ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

, , 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ,____ ,_____ 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ , ե , ե 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
14 օգոստոս 2020 թ. կնքված
N ՀՀ-ՍՄԿՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/3 *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն